Զեկույց
2024 թվականին ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների հիմնական արդյունքների վերաբերյալ

1. Նպատակ՝ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը՝ ուշադրությունը կենտրոնացնելով բնակչության առավել վտանգի ենթարկվող և խոցելի խմբերի վրա:

Ռազմավարություն 1. Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը թմրամիջոցների ներերակային օգտագործողների (ԹՆՕ) համար:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Տրամադրել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայություններ
2. Տրամադրել ափիոնատիպ նյութերից կախվածության փոխարինող մեթադոնային բուժում (ԱՓԲ) ԹՆՕ-ներին առաջնահերթ վայրերում
3. Իրականացնել ադվոկացիա (ակտիվ հանրային պաշտպանություն) և պաշտոնապես գրանցել Նալոքսոնը գերդոզավորումների ժամանակ բուժման և բուժաշխատողների կողմից բժշկական և համայնքային հաստատություններում կիրառման համար
4. Նալոքսոնի տրամադրում թմրանյութերից գերդոզավորման բուժման նպատակով
5. Գերդոզավորման և ԱՓԲ բուժման պետական ծառայություններ մատուցողների (նարկոլոգներ, ԱՓԲ ծառայությունների աշխատակիցներ, շտապօգնության աշխատակիցներ) ամենամյա ուսուցում (վերապատրաստում)
6. ԹՆՕ-ներին ծառայություններ տրամադրող ՀԿ-ների աշխատակիցների ամենամյա ուսուցում (վերապատրաստում) ՄԻԱՎ վարակի կանխարգելման, վնասի նվազեցման, ՄԻԱՎ/հեպատիտ Ց-ի (ինքնուրույն կատարվող) հետազոտությունների, համայնքային աութրիչ աշխատանքի, ԱՓԲ և գերդոզավորման բուժման, ՆԿԿ հարցերի վերաբերյալ
7. «Հավասարը հավասարին» սկզբունքով ԹՆՕ աութրիչ աշխատողների (ԱԱ) ամենամյա ուսուցում (վերապատրաստում) ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման, վնասի նվազեցման և ԱՓԲ ծառայությունների մատուցման ուղղությամբ աութրիչ աշխատանք կատարելու վերաբերյալ:

«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2024 թվականին ԻԱԻՄ ՍՀԿ-ի կողմից համաձայն սահմանված թիրախների շահառուներին տրամադրվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայություններ, բարձրացնելով կանխարգելիչ միջոցառումների հասանելիությունը թիրախ խմբերին: Տարվա ընթացքում ծրագիր ընդգրկվել է 6,441 շահառու, որոնցից 6,159-ը անցել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ

հետազոտություն: Ընդհանուր թիրախի սահմաններում աշխատանքներ են իրականացվել նաև Արցախից տեղահանված և թմրանյութերի ոչ ներարկային օգտագործող անձանց շրջանում: Մասնավորապես ծառայությունների նվազագույն փաթեթ է տրամադրվել Արցախից տեղահանված 271 անձանց, որոնցից 269-ը թեստավորվել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Ծառայությունների նվազագույն փաթեթ է տրամադրվել նաև թմրանյութերի ոչ ներարկային օգտագործող 300 անձանց որոնք բոլորը հետազոտվել են:

ԹՆՕ-ների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելիչ ծրագրերի շրջանակներում ծառայությունների ընդլայնված փաթեթը ներառում է մեթադոնային փոխարինող բուժման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և ըստ անհրաժեշտության ուղեգրում ՄՓԲ ծրագրում ընդգրկվելու նպատակով:

ՀՀ-ում 2024 թվականի ընթացքում 679 անձ ստացել է մեթադոնային փոխարինող բուժում: Քրեակատարողական հիմնարկներում ՄՓԲ ստացած շահառուների թիվը կազմում է՝ 210:

Ընտրված քաղաքներում/մարզերում «հավասարը հավասարին» սկզբունքով ԹՆՕ աութրիչ աշխատակիցներն անցել են ամենամյա դասընթացներ ՄԻԱՎ վարակի կանխարգելման, վնասի նվազեցման և աութրիչ աշխատանքի վերաբերյալ: Իրականացվել են նոր աութրիչների վերապատրաստման դասընթացներ որին ԻԱԻՄ ՍՀԿ-ի հրավերով մասնակցել են ԻՀԱԿ մասնագետները և ներկայացրել ՄԻԱՎ/ՁԻԱՀ ընհանուր հիմունքները, ՄԻԱՎ վարակի կանխարգելումն առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը ՀՀ-ում, ՀՌՎ բուժում, կանխարգելում (նախա և հետ կոնտակտային կանխարգելում), ինքնաթեստավորում, լնդային տրանսուդատի հետազոտություն OraQuick. արագ թեստ ՄԻԱՎ 1/2-ի հակամարմինների հայտնաբերման համար. գործնական աշխատանք թեմաները:

2024 թվականի ընթացքում իրականացվել է նաև թմրանյութերի ոչ ներարկային խմբի աութրիչների ընգրկման դասընթաց, որի ժամանակ ՀԿ աշխատակիցը համապարփակ տեղեկատվություն է տրամադրել ՄԻԱՎ-ի վերաբերյալ:

Ռազմավարություն 2 Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրողների (ԿՍ) և նրանց հաճախորդների համար:

Ռազմավարություն 3 Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը տղամարդու հետ սեռական կապեր ունեցող տղամարդկանց (SUS) համար:

Ռազմավարություն 4 Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը տրանսգենդեր անձանց համար:

Այս ռազմավարությունների ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցում ԿՍԿ-ների, SUS-ների և ՏԱ-ների համար:

2. ԿՍԿ, SUS և ՏԱ ծառայություններ մատուցող ՀԿ-ների ամենամյա ուսուցում (վերապատրաստում) ՄԻԱՎ վարակի կանխարգելման, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ (ինքնուրույն կատարվող) հետազոտությունների, ՍՎ և ՀՌՎ ծառայություններ ուղղորդման, համայնքային աութրիչ աշխատանքի, ՆԿԿ-ի վերաբերյալ:
3. «Հավասարը հավասարին» սկզբունքով աութրիչ աշխատողների ամենամյա ուսուցում (վերապատրաստում) իրականացնելու համար աութրիչ աշխատանք ԿՍԿ-ների, SUS-ների և ՏԱ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման և հետազոտման ծառայությունների, պետական սեռական և վերարտադրողական առողջության ծառայություններ ուղղորդման հարցերի ուղղությամբ
4. Իրականացնել էնդոկրինոլոգների ուսուցում տրանսգենդեր անձանց հատուկ բժշկական և հոգեբանական կարիքների վերաբերյալ:

«Նոր Սերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՆՍ ՄՀԿ) կողմից համաձայն սահմանված թիրախների շահառուներին տրամադրվել են ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայություններ, բարձրացնելով կանխարգելիչ միջոցառումների հասանելիությունը թիրախ խմբերին: 2024 թվականի ընթացքում ծառայությունների նվազագույն փաթեթ է ստացել 9,574 SUS 3,887 ԿՍԿ և 140 ՏԱ: Նույն ժամանակահատվածում ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորվել և հետթեստային խորհրդատվություն է ստացել համապատասխանաբար 9,498 SUS, 3,843 ԿՍԿ և 135 ՏԱ:

2024 թվականի ընթացքում ԻՀԱԿ-ում կազմակերպվել է ՆՍ ՄՀԿ-ի 34 աութրիչ աշխատակիցների վերապատրաստում «SUS-ների, ՏԱ-ների և ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն ինքնաթեստավորման միջոցով» թեմայով:

Ռազմավարություն 3. Ընդլայնել նախակոնտակտային կանխարգելման (ՆԿԿ) հասանելիությունը առավել վտանգի ենթարկվող խմբերի (ԱԵՎԽ-ների) համար

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Մեծացնել նախակոնտակտային կանխարգելման (ՆԿԿ) հասանելիությունը
2. ՆԿԿ-ի խթանում, կարողությունների զարգացում և պահանջարկի ձևավորում

SUS-ների, ՏԱ-ների և ԿՍԿ-ների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելիչ ծրագրերի շրջանակներում ծառայությունների ընդլայնված փաթեթը ներառում է ԻՀԱԿ-ում նախակոնտակտային կանխարգելման (PREP) և հետկոնտակտային կանխարգելման (PEP) վերաբերյալ տեղակատվության տրամադրում և առավել ռիսկային վարքագիծ դրսևորող շահառուներին ԻՀԱԿ ուղղորդում: Ընդլայնված փաթեթի շրջանակներում ըստ ցանկության շահառուներին տրամադրվում է նաև տեղեկատվական-կրթական նյութեր նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելման վերաբերյալ:

Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում և Կապանում 2024 թվականի ընթացքում անցկացված ՄԻԱՎ-ի կանխարգելման, հայտնաբերման և բուժման հիմունքները թեմայով դասընթացների ընթացքում բուժաշխատողներն իրազեկվել են ՆԿԿ-ի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ:

ՆՍ ՄՀԿ-ի «Հավասարը հավասարին» սկզբունքով աութրիչ աշխատողների ամենամյա ուսուցում (վերապատրաստում) դասընթացում ևս անդրադարձ է կատարվել ՆԿԿ-ի վերաբերյալ թեմաներին:

2024 թվականին նախակոնտակտային կանխարգելում է ստացել 81 անձ, բոլորի դեպքում էլ ՄԻԱՎ-ի փոխանցման հավանական ուղին հոմոսեքսուալ ճանապարհն է եղել: 2024թ.-ից ՆԿԿ հասանելի է պետական պատվերի շրջանակներում՝ բոլոր դիմողների համար:

Ռազմավարություն 4. Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը քրեակատարողական հիմնարկներում /ՔԿՀ գտնվող անձանց համար:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Ապահովել ՄԻԱՎ վարակի կանխարգելում քրեակատարողական հիմնարկներում գտնվող բոլոր անձանց համար հիմնական փաթեթը կընդլայնվի և կընդգրկի հեպատիտ Ց վիրուսի սկրինինգ և հեպատիտ Ց-ի բուժում, ներարկիչներ/ասեղներ, պահպանակներ:
2. Տրամադրել ՀՌՎ բուժում ՔԿՀ-ներում գտնվող բոլոր ՄԻԱՎ վարակակիր անձանց՝ համաձայն ազգային ուղեցույցների և պրոտոկոլների, այդ թվում՝ բուժման պատշաճ մոնիտորինգի իրականացում
3. Տրամադրել ափիոնատիպ նյութերից կախվածության փոխարինող մեթադոնային բուժում (ԱՓԲ) ՔԿՀ-ներում գտնվող ԹՆՕ-ներին (ովքեր համապատասխանում են կրիտերիաներին)
4. ՔԿՀ-ների բուժաշխատողների կարողությունների զարգացում ազատազրկված անձանց համապարփակ առողջապահական ծառայություններ տրամադրելու նպատակով, ամենամյա (վերապատրաստում) դասընթացներ ՔԿՀ-ների բուժաշխատողների համար ազատազրկված անձանց համապարփակ առողջապահական ծառայություններ տրամադրելու վերաբերյալ:
5. Մշակել և իրականացնել ՔԿՀ բժշկական կենտրոնի, ԱՆ/ԻՀԱԿ-ի, թմրամոլության բուժման կենտրոնների և վնասների նվազեցմամբ զբաղվող ՀԿ-ների միջև համատեղ քաղաքականություն և ռազմավարություն ՔԿՀ մտնող կամ ազատվող ԹՆՕ-ների համար մինչ ազատումը և ազատումից հետո ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ՝ ապահովելու համար ՄԻԱՎ/ՏԲ կանխարգելման և բուժման, ինչպես նաև վնասի նվազեցման ծառայությունների համակարգումը, շարունակականությունը և դրանց շուրջ համագործակցությունը:

   5.1 Զարգացնել նախկինում ազատազրկված անձանց համայնքի կարողություններն ու առաջնորդությունը:

5.2 Մշակել առողջապահական համապարփակ ռազմավարություն ՔԿՀ-ների համար՝ ընդգրկելով ՄԻԱՎ վարակը, ՏԲ-ն, հեպատիտներ Բ-ն և Ց-ն և այլ սեռավարակներ:

2024 թվականի ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվել է քրեակատարողական հիմնարկներում գտնվող 3649 անձ, 3106 անձ հետազոտվել է Հեպատիտ Ց-ի վերաբերյալ և 151 անձ ընդգրկվել է Հեպատիտ Ց-ի բուժման ազգային ծրագիր, ստանալով հակավիրուսային բուժում:

ՔԿՀ-ներում գտնվող ՄԻԱՎ վարակ ունեցող անձինք ստացել են ՀՌՎ բուժում և խնամք՝ համաձայն կլինիկական ուղեցույցների այդ թվում՝ ԻՀԱԿ բժիշկների կողմից պարբերական այցեր, բուժման պատշաճ մոնիթորինգի իրականացում: 2024 թվականի վերջի դրությամբ 37 ՄԻԱՎ-ով ապրող իր ՀՌՎ բուժումը ստանում է ՔԿՀ-ներում:

ՔԿՀ-ներում գտնվող 210 անձ 2024 թվականի ընթացքում ստացել է ափիոնատիպ նյութերից կախվածության փոխարինող մեթադոնային բուժում:

2024 թվականի ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն (ՆՍՀԿ) կազմակերպել է ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրի շրջանակներում իրականացվող ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների (ՔԿՀ) աշխատակիցների իրազեկության բարձրացման և ազատազրկված անձանց կրթատեղեկատվական, կարողությունների զարգացման դասընթացների և տեղեկատվական հանդիպումների շարք: «Ազատազրկված անձանց կարողությունների զարգացում» թեմայով դասընթացներ են իրականացվել ՀՀ Արդարադատության նախարարության «Սևան» ՔԿՀ-ում, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում և «Վանաձոր» ՔԿՀ-ում: Դասընթացների նպատակը տեղեկատվական կրթական հանդիպումների միջոցով Հայաստանի ՔԿՀ-ների ազատազրկված անձանց կարողությունները և առաջնորդությունը ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի, հեպատիտների, տուբերկուլոզի, մեթադոնային փոխարինող բուժման և առողջության իրավունքի վերաբերյալ զարգացնելն էր, ինչպես նաև տրամադրել կրթատեղեկատվական ու կանխարգելիչ նյութեր:

Ռազմավարություն 5. Ամրապնդել ծառայություններ մատուցողի կողմից նախաձեռնված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունների (ԾՆՀ) իրականացումը բոլոր հղիների համար և ՄԵՓԿ միջոցառումները ՄԻԱՎ վարակակիրների համար՝ մորից երեխային փոխանցումը վերացնելու նպատակով (ՄԵՓՎ)

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Նախածննդյան խնամքի (ՆԽ) կենտրոններ այցելող բոլոր հղիների համար ՄԻԱՎ վարակի և սիֆիլիսի սկրինինգի իրականացում և արագ/ռապիդ ՄԻԱՎ հետազոտության անցկացում նախքան երեխայի ծնունդը այն հղիների շրջանում, ովքեր չեն այցելել ՆԽ կենտրոններ
2. ՄԻԱՎ դրական արդյունքներով բոլոր հղիներին ապահովել ՀՌՎ դեղամիջոցներով իրենց չծնված երեխաներին վարակի փոխանցումը կանխելու համար, նորածինների վաղ ախտորոշում

3. Իրականացնել ամենամյա ուսուցում (վերապատրաստում) նախածննդյան խնամքի կենտրոնների մասնագետների համար ՄԵՓԿ ուղեցույցների և պոտոլոների վերաբերյալ
4. ՄԵՓԿ պրոտոկոլների և ուղեցույցների կանոնավոր վերանայում և թարմացում՝ ըստ ԱՀԿ ուղեցույցների և պրոտոկոլների

ՄԻԱՎ վարակի և սիֆիլիսի սկրինինգի համար նախածննդյան խնամքի ծառայություններ տրամադրող կենտրոնների համար գնվել են արագ/ռապիդ թեստ-համակարգեր և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցության և մեթոդական օգնության տրամադրման և որակի արտաքին հսկողության իրականացման շրջանակներում 2024 թվականի ընթացքում ԻՀԱԿ շարժական թիմը այցելել է նախածննդյան խնամք տրամադրող մարզային բոլոր բժշկական կենտրոններ:

2024 թվականին 34 143 (34 066 ՀՀ քաղաքացի և 77 օտարերկրյա քաղաքացի) հղիության ընթացքում առաջին անգամ հետազոտված հղիներից 23 ՀՀ քաղաքացու մոտ հաստատվել է ՄԻԱՎ դրական կարգավիճակ, որոնք բոլորը կցվել են ՀՌՎ բուժմանը: Տարվա ընթացքում մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում ստացել է 63 հղի (62 ՀՀ և 1 օտարերկրյա քաղաքացի): 2024 թվականին ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված բոլոր 55 երեխաները ստացել են ՄԻԱՎ-ի կանխարգելիչ բուժում և կյանքի առաջին երկու ամիսների ընթացքում հետազոտվել ՄԻԱՎ-ի հայտնաբերման պոլիմերազային շղթայական ռեակցիայի (PCR) մեթոդով:

2024 թվականին իրականացվել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության ծառայություններ տրամադրող ԲԿ-ներին և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցության և մեթոդական օգնության տրամադրում, որակի արտաքին հսկողության իրականացում շարժական խմբի միջոցով: Իրականացվել է 98 որակի արտաքին հսկողության այց: Ինչպես նաև ԻՀԱԿ-ում կազմակերպվել է «ՄԻԱՎ վարակով հղիների վարում և մորից՝ երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում» և «Միջին բուժանձնակազմի դերը մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելման գործում» թեմաներով դասընթացների շարք՝ Երևանի ծննդատների համապատասխանաբար ավագ և միջին բուժաշխատողներ համար: Դասընթացին մասնակցել են 81 ավագ և 93 միջին բուժաշխատողներ:

ՄԵՓԿ-ին առնչվող ուղեցույցները կանոնավոր կերպով վերանայվում և թարմացվում են՝ ըստ ԱՀԿ ուղեցույցների:

2024 թվականին ԱՀԿ-ի կողմից դիտարկվել են ՀՀ-ում վերջին 4 տարիների (2020-2023թթ.) ընթացքում ՄԵՓԿ շրջանակներում իրականացված աշխատանքները, որի արդյունքում երկիրը է շարունակել է ունենալ մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցումը վերացրած երկրի կարգավիճակ:

Ռազմավարություն 6. Բարելավել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների և ծրագրերի մատուցումը, համապարփակությունը և որակը լայն հասարակության և այլ ավելի խոցելի խմբերի, այդ թվում՝ աշխատանքային միգրանտների և նրանց զուգընկերների համար:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Հաղորդակցման ռազմավարության մշակում

1.1 Դպրոցների, համալսարանների, ընտրված աշխատավայրերի համար նախատեսված սոցիալական հարթակներով իրականացվող քարոզարշավի մշակում

1.2 Սոցիալական հարթակներով քարոզարշավի իրականացում ազդեցիկ մարդկանց/ինֆլյուենսերների կողմից դպրոցների, համալսարանների, ընտրված աշխատավայրերի համար

1.3 Իրազեկման միջոցով զգայուն վերաբերմունքի ձևավորում ՄԻԱՎ վարակի նկատմամբ աշխատուժի բարձր շարժունակություն ունեցող կոնկրետ աշխատավայրերում

2.Մասնագիտական գործունեությամբ պայմանավորված ՄԻԱՎ ռիսկային խմբում գտնվող բոլոր անձանց (100%), այդ թվում՝ բուժաշխատողների համար իրականացնել հետկոնտակտային կանխարգելում (ՀԿԿ):

2017 թվականից 8-9-րդ և 10-11-րդ դասարանների «Առողջ ապրելակերպ»-ի արդիականացված դասընթացներում ընդգրկված են նաև ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ դասաժամեր:

2024 թվականի ընթացքում հեռուստատեսությամբ և սոցիալական կայքերում իրականացվել է իրազեկման արշավ: Այդ նպատակով միջգային գրականության և նման առկա հոլովակների դիտարկման միջոցով, նկարահանվել է տեսահոլովակ որի նպատակն է խթանել խոցելի խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը, իրազեկել նախակոնտակտային կանխարգելման և դրա հասանելիության վերաբերյալ, ինչպես նաև շեշտադրել հետևողական բուժման կարևորությունը բուժման բարեհաջող ընթացքի համար: Հոլովակը ցուցադրվել է մարզային երեք հեռուստաալիքներով (Շիրակ, Լոռի և Գեղարքունիք) երեք շաբաթ տևողությամբ: 2024 թվականի ընթացքում պատրաստվել է նաև մեկ այլ հանրային իրազեկման հոլովակ, որի նպատակն է իրազեկել հանրությանը պահպանակների՝ ՄԻԱՎ-ի և այլ սեռավարակների կանխարգելման հարցում արդյունավետության վերաբերյալ և խթանել դրանց օգտագործման վարքագիծը: Հոլովակը տարածվել սոցիալական մեդիայով, թիրախային խումբը ՀՀ 18-40 տարեկան և՛ իգական, և՛ արական սեռի անձիք են, կարգավիճակը՝ ամուսնացած, նշանված, հարաբերությունների մեջ:

ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված ազգային արշավի շրջանակներում 2024 թվականի միջոցառումների մի մասը կազմակերպվել է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, հաշվի առնելով ՄԻԱՎ բարձր տարածվածությունը և ծառայությունների ապակենտրոնացման տենդենցները: Նպատակը հանրության շրջանում ևս մեկ անգամ թեմայի արդիականության շեշտադրումն էր և իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Գյումրիում կազմակերպվել է իրազեկման արշավ՝ քաղաքացիներին բաժանվել են տեղեկատվական թերթիկներ, հեռուստատեսությամբ և սոցիալական մեդիայով նկարահանվել և հեռարձակվել են ԻՀԱԿ մասնագետների մասնակցությամբ հաղորդումներ: Գյումրիում Վանաձորում և Երևանում տեղակայվել են շարժական

կլինիկաներ և ցանկացողները հնարավորություն են ունեցել անվճար և անանուն հետազոտվելու:

2024 թվականին 104 անձ ստացել է հետկոնտակտային կանխարգելում, այդ թվում՝ 92 ոչ մասնագիտական և 12 մասնագիտական: Հետկոնտակտային կանխարգելում ստացածներից 27-ը հանդիսացել են օտարերկրա քաղաքացիներ: Մասնագիտական գործունեությամբ պայմանավորված ՄԻԱՎ ռիսկային խմբում գտնվող բոլոր դիմած անձինք (100%) ստացել են ՀԿԿ:

Ռազմավարություն 9. Դոնորական արյան, արյան պատրաստուկների և օրգանների 100% սկրինինգ

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Դոնորական արյան, արյան պատրաստուկների և օրգանների 100% սկրինինգ

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ դոնորական արյան սկրինինգ: 2024թ. իրականացվել է դոնորական արյան նմուշների 22,908 հետազոտություն, ներառյալ 124 օտարերկրյա քաղաքացի:

2. Նպատակ՝ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, ԲՈՒԺՈՒՄ ԵՎ ԽՆԱՄՔ

Ամրապնդել ՄԻԱՎ վարակի հայտնաբերման, բուժման և խնամքի ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը՝ հետազոտությունների և բուժման կասկադի 95-95-95 հարաբերակցության հասնելու նպատակով

Ռազմավարություն 1. Մեծացնել ՄԻԱՎ վարակով ապրող այն մարդկանց թիվը, ովքեր գիտեն իրենց կարգավիճակի մասին

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. ՄԻԱՎ վարակի ախտորոշման արագ/ռապիդ թեստերի գնում ԱՎԽ-ների համար
2. ՄԻԱՎ վարակի ինդեքս հետազոտություն ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և ՏՍՏ-ների սեռական զուգընկերների շրջանում:
3. ՄԻԱՎ դեպքերի վարում՝ ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների և ՏԱ-ների շրջանում դեպքերի օպտիմալացված հայտնաբերում:
4. Մեծացնել ՄԻԱՎ/ՀՑՎ հետազոտությունների իրականացումը աշխատանքային միգրանտների շրջանում:
5. Իրականացնել ՄԻԱՎ/սիֆիլիսի հայտնաբերման արագ/ռապիդ թեստեր ԱՓԲ բուժում ստացող և ՁԻԱՀ-ի ԿՀԿ ու թմրամոլության բուժմամբ զբաղվող կենտրոններ այցելող այլ խոցելի խմբերի շրջանում:

6. Իրականացնել համակցված ՄԻԱՎ/սիֆիլիսի արագ/ռապիդ թեստեր բնակչության այլ խոցելի խմբերի համար (միգրանտներ, ՔԿՀ-ներում գտնվողներ, ԱՓԲ պացիենտներ և ՁԻԱՀ-ի ԿՀԿ և թմրամոլության բուժմամբ զբաղվող կենտրոններ այցելող այլ խոցելի խմբեր):
7. Իրականացնել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հաստատության ներսում ծառայություններ տրամադրողի կողմից նախաձեռնված հետազոտություններ (ԾՆՀ) այլ խոցելի խմբերի համար առաջնային բուժօգնության (ԱԲ) օղակում:
8. Իրականացնել ամենամյա (վերապատրաստում) ուսուցում բուժաշխատողների համար ՄԻԱՎ, ՏԲ և ՀՊՑ հետազոտությունների վերաբերյալ՝ նպաստելու համար ԾՆՀ արդյունավետ իրականացմանը:
9. Թարմացնել ՄԻԱՎ վարակի հետազոտություններին վերաբերող պրոտոկոլները և ուղենիշները 2 տարին մեկ անգամ:
10. Խթանել ՄԻԱՎ վարակի հետազոտությունները լայն հասարակության շրջանում և առաջնահերթ համարվող խմբերում (երիտասարդներ, համալսարանների ուսանողներ, կոնկրետ աշխատավայրեր և այլն) հատուկ ՄԻԱՎ հետազոտությունների քարոզարշավների, տպագիր նյութերի և սոցիալական հարթակների միջոցով:

2024 թվականին ԱՎԽ-ների համար ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ իրականացնելու նպատակով նախատեսված թեստ-համակարգերի ձեռք բերման գործընթացները իրականացվել են առանց խոչընդոտների, տարեկան պահանջարկին համապատասխան քանակով:

2024 թվականի ընթացքում ՄԻԱՎ-ով ապրող անձանց խնամք և աջակցություն ծրագրի շրջանակներում իրականացվել է ինդեքսային դեպքի գնահատման գործընթաց շահառուների շրջանում հատուկ մշակված հարցաշարերով: Արդյունքում ինդեքս դեպք է գնահատվել 72 շահառու, հետազոտվել են 29-ը, որից 6-ի մոտ հաստատվել է ՄԻԱՎ դրական կարգավիճակ: 2024 թվականի ընթացքում ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայություններից օգտվել և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվել է 192 ինդեքս դեպք: Ինդեքս դեպքերի հայտնաբերման աշխատանքների շրջանակներում SUS-ների սեռական զուգընկերների հետազոտություններն իրականացվել են խոցելի խմբերին տրամադրվող ծառայությունների շրջանակներում: ԻՀԱԿ-ում համաճարակաբանական հսկողության և խորհրդատվության ծառայությունների տրամադրման շրջանակներում 2024 թվականի ընթացքում հետազոտվել է 224 ՄԻԱՎ դրական անձի սեռական զուգընկեր կամ ԹՆՕ և 74 երեխա (0-14 տարեկան):

ԹՆՕ-ների, SUS-ների, ԿՍԿ-ների և ՏԱ-ների շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելում ԳՀ ծրագրի շրջանակներում հետազոտվել է 6,159 ԹՆՕ, հայտնաբերվել է 41 դրական դեպք, որից ԻՀԱԿ է հասել 31-ը և կարգավիճակը հաստատվել՝ 27-ի մոտ (1-ը հին պացիենտ): SUS-ների շրջանում կատարվել է 9,498 թեստավորում, որի արդյունքում հայտնաբերվել է 127 դրական դեպք, որից ԻՀԱԿ է հասել 107-ը և կարգավիճակը հաստատվել՝ 103-ի մոտ (4-ը հին պացիենտ): ԿՍԿ-ների շրջանում իրականացվել է 3,843 թեստավորում, հայտնաբերվել է 27 դրական դեպք , որից ԻՀԱԿ է հասել 21-ը և կարգավիճակը հաստատվել է 20-ի մոտ (2-ը հին

պացիենտ): ՏԳ-ների շրջանում իրականացվել է 135 թեստավորում, որից հայտնաբերվել է, ԻՀԱԿ հասել և հաստատվել 4 նախնական դրական դեպք (1-ը հին պացիենտ): Նոր հայտնաբերված ՄԻԱՎ վարակի դեպքերն արդյունավետորեն գրանցված են խնամքի և բուժման հաստատություններում:

ՄԻԱՎ-ի հայտնաբերում քաղաքաբնակ ի և նրանց զուգընկերների շրջանում ԳՀ ծրագրի 2024 թվականի համար թիրախ է հանդիսացել 26,000 թեստավորում՝ որից 150 հայտնաբերված դրական դեպք, արդյունքում փաստացի իրականացվել է 25,341 թեստավորում, որից հայտնաբերվել է 120 նախնական դրական դեպք, որից ԻՀԱԿ է հասել 112-ը և կարգավիճակը հաստատվել՝ 105-ի մոտ (9-ը հին պացիենտ՝ բուժման վերադարձ): Հեպատիտ Ց-ի նկատմամբ թեստավորվել է 25,274 անձ և գրանցվել է արագ թեստի 290 նախնական դրական արդյունք: Սիֆիլիսի վերաբերյալ թեստավորված 25,341 անձանցից 137-ի մոտ գրանցվել է նախնական դրական արդյունք:

2024 թվականի ընթացքում բնակչության այլ խոցելի խմբերի (միգրանտներ, ՔԿՀ-ներում գտնվողներ, Կախվածությունների բուժման ազգային կենտրոն դիմող պացիենտներ) հետազոտությունների համար տրամադրվել է համակցված ՄԻԱՎ/սիֆիլիսի արագ/ռապիդ թեստեր:

Հաստատության ներսում՝ ԱԲ օղակում, ծառայություններ տրամադրողի կողմից նախաձեռնված (ԾՆՀ) ՄԻԱՎ հետազոտություններ իրականացնող բուժհաստատություններում ՄԻԱՎ-ի հայտնաբերում քաղաքաբնակ միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում ԳՀ ծրագրի շրջանակներում իրականացվում է խոցելի խմբերի սահմանափակ քանակով հետազոտություններ: ՄԻԱՎ-ի հայտնաբերում քաղաքաբնակ միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում ԳՀ ծրագրի եռամսյակային մոնիթորինգային այցերի ընթացքում աշխատանքներ են տարվում բուժաշխատողների ՄԻԱՎ, ՏԲ և ՀՊՑ հետազոտությունների ԾՆՀ արդյունավետ իրականացման կապակցությամբ:

2024 թվականին իրականացվել է դասընթացների շարք՝ «ՄԻԱՎ-ի կանխարգելման, հայտնաբերման և բուժման հիմունքները» թեմայով: Դասընթացներին մասնակցել են Երևանից և ՀՀ բոլոր մարզերից 297 բուժաշխատողներ՝ տարբեր մասնագիտացումներով: ԻՀԱԿ ամբուլատոր կլինիկայի բժիշկները վերապատրաստվել են նաև «հաճախորդ/հիվանդ կողմնորոշված համագործակցություն բուժաշխատողի հետ» թեմայով:

2024 թվականի ընթացքում Հայաստանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների ալգորիթմների օպտամալացման նպատակով իրականացվել է պիլոտային ծրագիր, որով գնահատվել և մշակվել են ՄԻԱՎ ախտորոշման ալգորիթմի փոփոխության հնարավորությունները և տարբերակները:

Իրազեկման արշավի շրջանակներում հեռուստատեսությամբ և սոցիալական կայքերում ցուցադրման նպատակով նկարահանվել և ցուցադրվել են տեսահոլովակներ: ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված ազգային արշավի շրջանակներում 2024 թվականին Գյումրիում կազմակերպվել է իրազեկման արշավ՝ քաղաքացիներին բաժանվել են տեղեկատվական թերթիկներ, հեռուստատեսությամբ և սոցիալական մեդիայով նկարահանվել և հեռարձակվել են ԻՀԱԿ մասնագետների մասնակցությամբ իրազեկող հեռուստահաղորդումներ: ԻԱԻՄ ՍՀԿ-ի կողմից իրականացվել է «Երիտասարդների շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելում հավասարակիցների ներգրավմամբ» խորագրով դասընթաց:

Ռազմավարություն 2. Մեծացնել իրենց ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին տեղյակ և ՀՌՎ բուժում ստացող անձանց տոկոսը և մեծացնել ՀՌՎ բուժում ստացող այն մարդկանց տոկոսը, ում մոտ առկա է վիրուսային ծանրաբեռնվածության մակարդակի նվազում:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Տրամադրել ՀՌՎ բուժում դրա կարիքն ունեցող բոլոր ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար՝ համաձայն ազգային ուղեցույցների և պրոտոկոլների՝ հիմնվելով դեպքերի վարման պացիենտների վրա կենտրոնացած մոտեցման վրա, ինչն ուղեկցվում է տարբեր կլինիկական, հոգեբանական և սոցիալական ծառայություններ տրամադրողների միջև արդյունավետ համագործակցությամբ
2. Մշակել համակարգման և համագործակցության մեխանիզմներ Հայաստանի և Ռուսաստանի միջև, որտեղ աշխատում են Հայաստանից մեկնած ամենամեծ թվով աշխատանքային միգրանտները՝ ապահովելու համար ՀՌՎ բուժման և դրա հետ կապված ծառայությունների անընդհատությունը նրանց համար:
3. Վերանայել ՄԻԱՎ բուժման ծառայությունների տրամադրման առկա մոդելը և փորձնական իրականացնել ՀՌՎ ծառայությունների ապակենտրոնացված տրամադրումը կոնկրետ վայրերում, ընդլայնել 2023 դրությամբ
4. Գնել ՄԻԱՎ թեստեր և առողջապահական ապրանքներ (ԴԿ4/CD4, ՎԾ/վիրուսային ծանրաբեռնվածություն, բլոթ թեստ և այլն) ԻՀԱԿ համար
5. Տրամարդել ՕՎ կանխարգելում ԴԿ/CD4<200-ով պացիենտների համար և օպորտունիստական վարակների անվճար բուժում դրա կարիքն ունեցող բոլոր ՄԻԱՎ վարակակիր պացիենտների համար
6. Բարելավել հեպատիտ Ց-ի հետազոտությունները և բուժումը ԹՆՕ-ների և ՔՀԿ-ներում գտնվող անձանց համար (ադվոկացիա/շահապաշտպանություն և ախտորոշման պարագաների ու դեղամիջոցների գնում)
7. Իրականացնել վերապատրաստում լաբորատոր աշխատակիցների համար ՄԻԱՎ (ՄԻԱՎ Վարակի հետազոտություն, վիրուսային ծանրաբեռնվածություն, կայունություն) և օպորտունիստական վարակաների համար ախտորոշիչ ծառայություններն ամրապնդելու նպատակով
8. Իրականացնել կարողությունների զարգացման ամենամյա նախաձեռնություններ կլինիկական աշխատակիցների համար ՀՌՎ բուժման և պահանջների կատարման, ՏԲ կանխարգելման վերաբերյալ ՀՌՎ բուժման և բուժման պահանջների կատարման բարելավման նպատակով: ՀՌՎ բուժում իրականացնող աշխատակիցների մեջ կընդգրկվեն նաև ՔԿՀ-ների բուժծառայությունները և մանկաբուժական հաստատությունների ՀՌՎ բուժում իրականացնողները
9. Թարմացնել ՄԻԱՎ վարակի բուժման պրոտոկոլները

10. Բարելավել ՄԻԱՎ/ՍՎ-ների, ՏԲ-ի, վիրուսային հեպատիտի և ՕՎ-ների ախտորոշման և դեղամիջոցների գնումների ու մատակարարման կառավարման (ԳՄԿ) գիտելիքները:
11. Ձևավորել մասնակցություն որակի արտաքին ապահովման համակարգում (ՈԱԱ) լաբորատորիայի գործունեությունը որևէ արտաքին գործակալության/լաբորատորիայի կողմից օբյեկտիվորեն ստուգելու նպատակով

Հակառետրովիրուսային բուժում տրամադրվել է դեռևս 2017 թվականին երկրում ներդրված «բուժել բոլորին» ռազմավարությանը համապատասխան, համաձայն որի, բուժում առաջարկվում է ՄԻԱՎ վարակ ախտորոշումով բոլոր պացիենտներին անկախ CD4+ լիմֆոցիտների քանակից և հիվանդության կլինիկական փուլից: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՌՎ բուժում է ստանում 3,823 ՄԻԱՎ-ով ապրող: ՀՌՎ բուժման մեջ ընդգրկված ՄԻԱՎ վարակով բոլոր պացիենտները բուժումը ստացել են ըստ ազգային ուղեցույցների: Դեղերի քանակները բավարարում են բուժման մեջ ընդգրկված բոլոր պացիենտներին, մատակարարման ընդհատումներ չեն եղել:

2024 թվականի ընթացքում Լոռու և Արարատի մարզերում իրականացվել են ՀՌՎ դեղորայքի ապակենտրոնացված տրամադրման ծառայություններ: Շիրակի մարզում բուժաշխատողների մասնագիտական վերապատրաստումը ապահովելուց հետո, մարզում բնակվող ՄԻԱՎ-ով ապրողները ուղղորդվել են Գյումրու ԲԿ ՄԻԱՎ վերաբերյալ դիսպանսեր հսկողության ծառայությունը իրենց բնակության վայրին առավել մոտ ստանալու համար: 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Շիրակի մարզում ՄԻԱՎ-ի դիսպանսեր հսկողության մեջ գտնվել է 90 պացիենտ՝ Շիրակի մարզում բնակվող և ՀՌՎ բուժման մեջ գտնվող ՄԻԱՎ-ով ապրողների 20%-ը:

2024 թվականի ընթացքում թեստ-համակարգերի գնման գործընթացի խոչընդոտներ և մատակարարման ընդհատումներ չեն եղել:

Օպորտունիստական վարակների կանխարգելումն և բուժումն իրականացվել է ըստ ազգային ուղեցույցների: 2024 թվականի ընթացքում ՄԻԱՎ-ով ապրող 553 ՀՀ քաղաքացի ստացել է ՕՎ կանխարգելում, որից 84-ը 2024 թվականին նոր հաստատված դեպքեր են: ՄԻԱՎ-ով ապրող 142 ՀՀ քաղաքացի ստացել է ՕՎ բուժում, որից 111-ը 2024 թվականին նոր հաստատված դեպքեր են: 2024 թվականին իզոնիազիդով ՏԲ-ի կանխարգելիչ բուժում ստացել է 232 ՀՀ քաղաքացի:

2024 թվականի ընթացքում ՔԿՀ-ներում Հեպատիտ Ց-ի վերաբերյալ հետազոտվել է 3106 ազատազրկված անձ և 151-ը ընդգրկվել է Հեպատիտ Ց-ի բուժման ազգային ծրագիր, ստանալով հակավիրուսային բուժում: «Աշխարհի բժիշկներ-Ֆրանսիա» հայաստանյան ներկայացուցչությունը իրականացրել է ԹՆՕ-ների շրջանում «Թերօգտագործվող գործիքների ներդրման խթանում և Հեպատիտ Ց-ի բուժման հեշտացում» ծրագիրը, որի Հեպատիտ Ց-ի բուժման ուղիների պարզեցման փորձարկման շրջանակներում 2024 թվականի ընթացքում ՀՑՎ բուժման մեջ է ընդգրկվել 47 ԹՆՕ:

2024 թվականին ԻՀԱԿ մասնագետները մասնակցել են «ՄԻԱՎ-ի թեստավորման ռազմավարության վերանայման լավագույն փորձը և հետագա ուղիները», «ՄԻԱՎ-ի թեստավորման ծառայությունների բարելավումը ԱՀԿ-ի

առաջարկություններին համապատասխան EECA երկրներում» և «Կենսաանվտանգությունը և կենսաապահովածությունը լաբորատորիաներում» թեմաներով վերապատրստման սեմինարներին: 2024թ. ԻՀԱԿ բժիշկ-լաբորանտները ԱԱԻ-ի հետ համատեղ կազմակերպել և անցկացրել են ՇՄՋ կրեդիտավորված վերապատրաստման դասընթաց՝ «Պոլիմերազային շղթայական ռեակցիայի և մոլեկուլյար-գենետիկ մեթոդներով լաբորատոր հետազոտությունների իրականացումը կլինիկական պրակտիկայում» բժիշկ-լաբորանտների և լաբորանտների համար: ԻՀԱԿ-ի լաբորատոր ախտորոշման ծառայությունը գրանցվել և մասնակցություն է ունեցել որակի արտաքին վերահսկման համակարգում (INSTAND)՝ INSTAND HIV-EQA Germany: Գյումրի քաղաքում ՄԻԱՎ ծառայությունների ապակենտրոնացված տրամադրման ծրագրի շրջանակներում, լաբորատոր մասնագետները վերապատրաստվել են ՄԻԱՎ և օպորտունիստական վարակների համար ախտորոշիչ ծառայությունների արդիական թեմաներով:

2024 թվականին «ՄԻԱՎ-ի հայտնաբերում աշխատանքային միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում» ծրագրի մեջ ընդգրկված բուժաշխատողների համար իրականացված «ՄԻԱՎ-ի կանխարգելման, հայտնաբերման և բուժման հիմունքները» թեմայով դասընթացների շարքը նույնպես անդրադարձել է լաբորատոր ախտորոշման ծառայությանն առնչվող մի շարք թեմաների:

«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած վարակի հակառետրովիրուսային բուժման կլինիկական ուղեցույցը» թարմացվել է 2023 թվականին: 2024 թվականին թարմացվել է «ՄԻԱՎ վարակի նախակոնտակտային կանխարգելման» կլինիկական ուղեցույցը:

ԻՀԱԿ-ի լաբորատոր ախտորոշման ծառայությունը գրանցվել և մասնակցություն է ունեցել Որակի արտաքին վերահսկման համակարգում (INSTAND) INSTAND HIV-EQA Germany, որով ապահովվելու է որակի արտաքին հսկողությունը:

Ռազմավարություն 3. Ամրապնդել ՄԻԱՎ/ՁԻԱՀ խնամքի ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Տրամադրել համապարփակ խնամք և աջակցություն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար:
2. ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խնամքի և աջակցության ծառայությունների փաթեթի վերանայում:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ կողմից «ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակներում ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ օգտվում են խնամքի և աջակցության համապարփակ ծառայություններից:

2024 թվականի ընթացքում 2,531 ՄԻԱՎ-ով ապրող մարդու տրամադրվել է 11,349 խնամքի և աջակցության ծառայություն: Խնամքի և աջակցության ծառայություններից օգտված ՄԻԱՎ-ով ապրողներից 2291-ը ստացել են առնվազն 2 տարբեր ծառայություններ: Ծառայությունների մեջ ներառված են «հավասարը՝ հավասարին» խորհրդատվություն, սոցիալական, իրավաբանական և հոգեբանական աջակցություն, ՀՌՎ դեղերի փոխանցում, փոխօգնության խմբեր,

շարժական թիմի այցեր և այլն: ԻԱԻՄ-ի կողմից իրականացվող «Խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում բացի վերը թվարկված հիմնական ծառայություններից տրամադրվել են նաև հավելյալ ծառայություններ՝ այդ թվում սննդի փաթեթ, հիգիենիկ պարագաներ, հագուստ, կոշիկ, այլ դեղորայք, ՀՀ-ից դուրս դեղերի փոխանցման վճար:

3. Նպատակ՝ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ամրապնդել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման միջոցառումների կայունությունը, նվազեցնել խարանն ու խտրականությունը, խթանել մարդու իրավունքները և գենդերային հավասարությունը

Ռազմավարություն 1. Ամրապնդել ԱՎԽ-ների հետ աշխատող ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ և կազմակերպական կարողությունները՝ ապահովելու համար ինտեգրված, համայնքահեն ՄԻԱՎ հակազդման գործողություններ, ինչն էլ կնպաստի ՄԻԱՎ հակազդման գործողություններ, ինչն էլ կնպաստի ՄԻԱՎ վարակի տարածման տրանսֆորմատիվ և կայուն հակազդմանը:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Ամրապնդել ընտրված/կոնկրետ տեղական ՔՀԿ-ների ինստիտուցիոնալ կազմակերպման կարողությունները:
2. Իրականացնել շարունակական շահապաշտպանության և համայնքի մոբիլիզացման միջամտություններ պետական ֆինանսական միջոցները մոբիլիզացնելու և առավել վտանգված խմբերին ՄԻԱՎ/ՏԲ ծառայություններ մատուցող ՔՀԿ-ների, նախարարությունների, պետական (կենտրոնական,մարզային, քաղաքային) ոլորտների (առողջապահություն, արդարադատություն, ներքին գործեր, ֆինանսներ, սոցիալական հարցեր, երիտասարդություն [բարձրագույն] կրթություն) , նախարարությունների և ՔՀԿ-ների միջև համագործակցությունն ամրապնդելու նպատակով

Հաստատված է արդյունավետ գործընկերություն տարբեր ոլորտների միջև ազգային և տեղական մակարդակներում: ՔՀԿ-ների կողմից կազմակերպված համայքի խնդիրների վերհանմանը ուղղված տարաբնույթ միջոցառումներին մասնակցում են պետական մարմինների ներկայացուցիչներ:

Ռազմավարություն 2. Ձևավորել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային կայուն գործողությունների համար նպաստավոր իրավական և ֆինանսական դաշտ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՄԻԱՎ վարակի կանխարգելմանը առավել վտանգի ենթարկվող և այլ խոցելի խմբերի շրջանում:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Վերանայել/թարմացնել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ գործող օրենքը և այլ իրավական/կարգավորիչ փաստաթղթեր՝ դրանցում ԱՎԽ-ների և այլ խմբերի

համար բոլոր առաջնահերթ ծառայություններն ընդգրկելու նպատակով, օրենսդրության վերանայումը/լրամշակումը կարող է բացասաբար անդրադառնալ ՄԻԱՎ ծառայությունների մատուցման վրա և/կամ կարող է առաջանալ ծառայությունների տրամադրմանն աջակցելու անհրաժեշտություն
2. Մարդու իրավունքների խախտումների մոնիթորինգ
3. Ամրապնդել գնումների մեխանիզմները
4. Ամրապնդել/բարելավել բուժաշխատողների մոտիվացման մեխանիզմները (ՏԲ, ՄԻԱՎ, ԱՓԲ և այլն)

2024 թվականի ընթացքում իրականացվել է ադվոկացիա ՄԻԱՎ-ի ոլորտի որոշ իրավական փաստաթղթերի փոփոխման ուղղությամբ, հատկապես մեծ ջանքեր են գործադրվել ՄԻԱՎ-ի մասին օրենքի վերանայման և նրանից կախված այլ իրավական ակտերի ադապտացիայի նպատակով:

Մարդու իրավունքների խախտումների մոնիթորինգը կրում է շարունակական բնույթ, դրանցից տուժած անձանց տրամադրվում է իրավական աջակցություն ՄԻԱՎ-ով ապրողների խնամք և աջակցություն ծրագրի շրջանակներում: ԻԱԻՄ ՍՀԿ-ն մշակել է ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ իրավախախտումների վերաբերյալ զեկույց 2024 թվականի համար, և այն տեղադրված է կազմակերպության կայք-էջում:

2024 թվականին գնումների գործընթացն ընթացել է բնականոն հունով, համապատասխան ծախսանյութերի ձեռքբերման գործընթացը չի ընդհատվել:

Ռազմավարություն 3. Ապահովել բարենպաստ ծրագրային և քաղաքական դաշտ և համայնքային միջավայրեր առավել վտանգի ենթարկվող խմբերի և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման, խնամքի և բուժման համար:

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Երևանում և բարձր ռիսկայնություն ունեցող մարզերում կոնկրետ բուժաշխատողների և/կամ ՔՀԿ-ների աշխատակիցների ուսուցում և իրազեկման միջոցով զգայուն վերաբերմունքի ձևավորում ԱՎԽ-ների և այլ խոցելի խմբերի պացիենտների վարման նկատմամբ:
2. Տեխնիկական աջակցություն պացիենտների իրավունքների և բժշկական էթիկայի հարցերը բուժաշխատողների համար նախատեսված դասընթացներում ինտեգրելու համար
3. ՔՀԿ աութրիչ աշխատակիցների ուսուցում՝ առավել խոցելի խմբերի շրջանում իրավական գրագիտության մակարդակը բարձրացնելու նպատակով
4. Տեխնիկական աջակցություն Համայնք, իրավունքներ և գենդեր (ՀԻԳ) 2020-2021թ. գնահատման մեջ հատկորոշված խոչընդոտները վերացնելու համար
5. Բարձր ռիսկայնություն ունեցող շրջաններում և քաղաքներում ոստիկանության ընտրված աշխատողների (ղեկավարություն և տեղի ոստիկաններ) և համայնքային ղեկավարների ուսուցում և իրազեկման միջոցով զգայուն վերաբերմունքի ձևավորում ԱՎԽ-ների հետ աշխատելու նկատմամբ

6. Խարանի և խտրականության հարցերի շուրջ կարողությունների զարգացում
7. Ընտրված (զանգվածային) լրատվամիջոցների համար (ղեկավարներ և աշխատակզմ) ուսուցում և իրազեկման միջոցով զգայուն վերաբերմունքի ձևավորում ՄԻԱՎԱՄ և ԱՎԽ-ների իրավունքների նկատմամբ և ծրագրերի վերաբերյալ

Երևանում և բարձր ռիսկայնություն ունեցող մարզերում միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի շրջանակներում իրականացվող մոնիթորինգային այցերի ընթացքում բուժաշխատողների հետ տարվում են ակտիվ աշխատանքներ ԱՎԵԽ-ների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:

ԻՀԱԿ-ում կայացել են «ՄԻԱՎ վարակով հղիների վարում և մորից՝ երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում» և «Միջին բուժանձնակազմի դերը մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելման գործում» թեմաներով դասընթացների շարք՝ Երևանի ծննդատների համապատասխանաբար ավագ և միջին բուժաշխատողներ համար: Դասընթացին մասնակցել են 81 ավագ և 93 միջին բուժաշխատողներ, արծածվել են խարանի և խտրակաունթյանն առնչվող թեմաներ: ԻՀԱԿ մասնագետներն անցել են «հաճախորդ/հիվանդ կողմնորոշված համագործակցություն բուժաշխատողի հետ» թեմայով երկամսյա վերապատրաստում: ԻԱԻՄ ՍՀԿ-ն շարունակաբար իրականացնում է ՄԻԱՎ, ՀՌՎ բուժման նորարարական մոտեցումները և կանխարգելման ռազմավարությունները, խարանը և խտրականությունը ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ, ՄԻԱՎ-ի ոլորտի իրավակարգավորումները, օրենսդրական և գործնական բացերը թեմաներով դասընթացներ պետական և ոչ պետական ոլորտի տարբեր կազմակերպությունների աշխատակիցների շրջանում:

ԻՀԱԿ մասնագետները տարվա ընթացքում ունեցել են տարբեր հեռուստատեսային հաղորդումների մասնակցություն, ասուլիսներ, որոնց ընթացքում հանրությանը տրամադրվել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվություն:

4. Նպատակ՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեծացնել ռազմավարական տեղեկատվության առկայությունը և օգտագործումը փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնելու նպատակով:

Ռազմավարություն 1. Ամրապնդել ՄԻԱՎ վարակին առնչվող հսկողության և տեղեկատվության համակարգերը (ընթացիկ տվյալների հավաքում, հաշվետվություններ, տվյալների պահպանումև վերլուծություն)

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Իրականացնել ԻԿՎՀ ուսումնասիրություններ բոլոր ԱՎԽ-ների շրջանում (ԹՆՕ-ներ, ԿՍ-ներ, ՏՍՏ-ներ, ՏԳ անձինք) 2024թ.-ին

2. Իրականացնել ԻԿՎՀ ուսումնասիրություններ բոլոր աշխատանքային միգրանտների շրջանում 2024թ.-ին
3. Կայուն դետքային հսկողության (պլյուս) համակարգի ստեղծում առավել վտանգվող խմբերում ՄԻԱՎ/ՍՎ/վիրուսային հեպատիտ/ՏԲ-ի համար
4. Իրականացնել կանոնավոր ուսուցում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հանրապետական և մարզային մակարդակների համաճարակաբանների համար

ԻԿՎՀ հերթական հետազոտությունը պլանավորվում է իրականացնել 2025 թվականին՝ ԹՆՕ, ՏՍՏ, ՏԱ և աշխատանքային միգրանտների շրջանում:

2024 թվականի ընթացքում ԻՀԱԿ-ում իրականացվել են մի շարք վերլուծություններ հետազոտություն-բուժում կասկադի բարելավման հիմնական մարտահրավերների վերաբերյալ և մշակվել ներքին մոնիթորինգային մի շարք գործիքներ՝ բարելավելու ՀՌՎ բուժման կցելու, բուժումից դուրս չմնալու, բուժման մոնիթորինգի իրականացման գործընթացները:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցության և մեթոդական օգնության տրամադրման և որակի արտաքին հսկողության իրականացման շրջանակներում 2024 թվականի ընթացքում իրականացված այցերի շրջանակներում ԻՀԱԿ համաճարակաբանները խորհրդատվություններ են տրամադրել բժշկական կազմակերպություններում վարվող և ուղեցույցներով նախատեսվող փաստաթղթերի, հաշվետվական ձևաչափերի, ընդունված գործելակարգերի վերաբերյալ, ինչպես նաև ՄԻԱՎ վերաբերյալ դասընթացների կամավորական սկզբունքով մասնակցել են մարզային համաճարակաբաններ:

Ռազմավարություն 2. Գործառնական հետազոտությունների և հատուկ ուսումնասիրությունների իրականացում

Այս ռազմավարության ներքո նախատեսված էր իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Իրականացնել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների որակի և հաճախորդների գոհունակության գնահատման ուսումնասիրություն 2022թ.-ին, 2024թ.-ին և 2026թ.-ին:
2. Իրականացնել 2022-2026 թթ. Ազգային ռազմավարական պլանի միջնաժամկետ վերանայում 2024թ.-ին:
3. Շարունակել շճակոնվերսիայի ուսումնասիրության իրականացումը և ինտեգրել այն ընթացիկ հսկողության գործընթացում:

«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հասարակական կազմակերպությունների և ԱԱՊ օղակի կողմից տրամադրվող ՄԻԱՎ կանխարգելման ծառայությունները մշտապես գտնվում են ԻՀԱԿ Մոնիթորինգի և գնահատման բաժնի մշտադիտարկման դաշտում: Իրականացվում են ամսական և եռամսյակային մոնիթորինգային այցեր, որոնց ընթացքում խորացված

հարցազրույցների միջոցով գնահատվում է շահառուների գոհունակության աստիճանը, ինչպես նաև ստացած ծառայությունների որակը:

2024 թվականին իրականացվել է Ազգային ռազմավարական պլանի միջնաժամկետ վերանայում, որի արդյունքում թարմացվել են ցուցանիշները և թիրախները:

Առաջնահերթ միջոցառումների թիրախներ և 2024 թվականի կատարողական արդյունքներ

Առաջնահերթ միջոցառումներ	Ակնկալվող արդյունքներ/ցուցանիշներ	Ելքային տվյալներ		2024	
		Արժեք	Տարի	2024 թիրախ	2024 կատարողական
Ի. ՄԻԱՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ					
1) Ռազմավարություն 1. ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքերի նվազեցում ՄԻԱՎ-ով վարակման առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում				ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թվի 80% նվազում Ծրագրի ավարտին	
				Ծրագրի ավարտին ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 92%-ը տեղյակ կլինի իր կարգավիճակի մասին	
ա. ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացում ԹՆՕ-ների շրջանում	ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում	2.6%	2021	--	--
	HIV-O6. Ներերակային թմրամիջոցի վերջին ներարկման ժամանակ ներարկման ստերիլ պարագաներ օգտագործած ԹՆՕ-ների տոկոսը	99%	2021	--	--
	Վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած ԹՆՕ-ների տոկոսը	59%	2021	--	--
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող ԹՆՕ-ների տոկոսը	20%	2021	--	--
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ներառված ԹՆՕ-ների տոկոսը	42%	2021	41%	46%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԹՆՕ-ների տոկոսը	35%	2021	41%	44%
բ. Փոխարինող բուժման իրականացում ԹՆՕ-ների համար	ՕՓԲ մեջ ներառված ԹՆՕ-ների տոկոսը, ովքեր բուժում են ստացել առնվազն 6 ամիսների ընթացքում	82.7%	2021	85%	81%
	Փոխարինող բուժման ծրագրում ներառված ԹՆՕ-ների քանակը	780	2021	850	889

գ. ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում ԿՍԿ-ների շրջանում	ՄԻԱՎ վարակի տարածվածությունը ԿՍԿ-ների շրջանում	0.2%	2021	--	--
	Հաճախորդի հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած	93.3%	2021	--	--
	ԿՍԿ-ների տոկոսը			--	--
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող ԿՍԿ-ների տոկոսը	32%	2021	--	--
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ներառված ԿՍԿ-ների տոկոսը	41%	2021	46%	48%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ԿՍԿ-ների տոոկսը	39%	2021	44%	47%
դ. ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում **SUS**-ների շրջանում	ՄԻԱՎ վարակի տարածվածությունը SUS-ների շրջանում	5%	2021	-	-
	Տղամարդ զուգընկերոջ հետ վերջին անալ սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած SUS-ների տոկոսը	75.3%	2021	--	-
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող SUS-ների տոկոսը	26,90%	2021	--	-
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված SUS-ների տոկոսը	37%	2021	44%	42%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած SUS-ների տոկոսը	35%	2021	42%	42%
ե. ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում **տրանսգենդեր անձանց** շրջանում	ՄԻԱՎ վարակի տարածվածությունը տրանսգենդեր անձանց շրջանում	2.5%	2021	--	--

	Ոչ մշտական տղամարդ զուգընկերոջ հետ վերջին անալ սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած տրանսգենդեր անձանց տոկոսը	88%	2021	--	--
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող տրանսգենդեր անձանց տոկոսը	58%	2021	--	--
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ՏԳ անձանց տոկոսը	9%	2020	15%	14%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած ՏԳ անձանց տոկոսը	9%	2020	14%	13%
զ. ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի իրականացում աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքի անդամների շրջանում	ՄԻԱՎ վարակի տարածվածությունը աշխատանքային միգրանտների շրջանում	1.2%	2018	<1%	Հետազոտությունը կիրականացվի 2025թ.-ին
	Մշտական զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած աշխատանքային միգրանտների տոկոսը	35%	2018	--	--
	Պատահական զուգընկերոջ հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած աշխատանքային միգրանտների տոկոսը	81%	2018	--	--
	Կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրողի (ԿՍ) հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած աշխատանքային միգրանտների տոկոսը	73%	2018	--	--

	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող աշխատանքային միգրանտների տոկոսը	38.7%	2018	--	--
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած աշխատանքային միգրանտերի և նրանց զուգընկերների տոկոսը (ծրագրային տվյալներ)	27%	2021	47%	66%
	PSE=38,258			18000	25341
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման միջոցառումների քանակ	10	2020	4 առնվազն տարեկան	24
է. Հյուրընկալող երկրների հետ համագործակցության զարգացում աշխատանքային միգրանտների (արտասահմանում ապրող ՀՀ քաղաքացիների) համար ՄԻԱՎ վարակի հարցերով խորհրդատվության, ՄԻԱՎ-ի վերաբերյալ անանուն հետազոտության և ՀՌՎ բուժման անընդհատության ապահովման նպատակով	ՄԻԱՎ վարակի կանխարգելման և ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունների և ՀՌՎ բուժման հասանելիության ընդլայնում	-	2018	Աշխատանքային միգրանտների 60%-ի համար հասանելի է ՄԻԱՎ-ի նկատմամբ թեստավորումը և ՀՌՎ բուժումը	Աշխատանքային միգրանտների 60%-ի համար հասանելի է ՄԻԱՎ-ի նկատմամբ թեստավորումը և ՀՌՎ բուժումը
ը. ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծրագրերի իրականացում քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց շրջանում	ՄԻԱՎ վարակի տարածվածությունը ՔԿՀ-ներում գտնվող անձանց շրջանում	1%	2020	--	--
	ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ընդգրկված ՔԿՀ-ներում գտնվող անձանց թիվը (ծրագրային տվյալներ)	-	2018	3000	3649
	ՔԿՀ-ներում գտնվող անձանց տոկոսը, ովքեր ընդգրկվել են ՄԻԱՎ կանխարգելման ծրագրում (ծրագրային տվյալներ)	70%	2020	70%	64%

	ՔԿՀ-ներում գտնվող անձանց թիվը, ովքեր անցել են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն (ծրագրային տվյալներ)	1500	2020	2500	3649
թ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ իրազեկման և կանխարգելման աշխատանքների իրականացում երիտասարդների շրջանում	ՄԻԱՎ վարակի տարածվածությունը 15-24 տարեկան երիտասարդների շրջանում	0,10%	2019	<0.1%	<0.1%
ժ. «Առողջ ապրելակերպ» դասընթացի իրականացում դպրոցներում	ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ ունեցող 15-24 տարեկան երիտասարդների տոկոսը	39.5%	2016	70%	Գնահատման վերաբերյալ հետազոտություն չի իրականացվել
ժա. Դասընթաց-սեմինարների անցկացում ՄԻԱՎ-ով վարակման առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում կանխարգելիչ աշխատանքներ իրականացնողների համար	Դասընթացներին մասնակցած ՀԿ աշխատակիցների քանակը	60	2021	105	41
ժբ. Նախակոնտակտային կանխարգելում	Նախակոնտակտային կանխարգելում ստացած անձանց քանակը	14	2021	130	81
ժգ. Զանգվածային լրատվամիջոցներով ՄԻԱՎ-ին առնչվող թեմաների լուսաբանում, ՄԻԱՎ-ի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանը և խտրականությունը նվազեցնելու նպատակով:	Նվազեցված խարան և խտրականություն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ	-	2018	--	--
2) Ռազմավարություն 2. ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում առողջապահական հաստատություններում				Դոնորական արյան միջոցով ՄԻՎ վարակի փոխանցման որևէ դեպք չի գրանցվի	

				Առողջապահական հաստատություններում ՄԻԱՎ-ով նոզոքոմիալ վարակման որևէ դեպք չի գրանցվի	
				Հետկոնտակտային կանխարգելում ստացած անձանց շրջանում ՄԻԱՎ վարակի որևէ դեպք չի գրանցվի	
ա. Դոնորական արյան սկրինինգ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված դոնորական արյան նմուշների տոկոսը	100%	2020	100%	100%
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված դոնորական արյան նմուշների քանակը		2020	20000	22784
	ՄԻԱՎ-ի վերաբերյալ դոնորական արյան հետազոտություն իրականացնող լաբորատորիաների քանակը, որոնք անցել են որակի արտաքին վերահսկում	Բոլոր լաբորատորիաները s	2020	Բոլոր լաբորատորիաները	17
3) Ռազմավարություն 3. ՄԻԱՎ վարակի հետազոտման ծառայությունների ընդլայնում				ՄԻԱՎ ունեցող անձանց 90%-ը տեղյակ է իրենց կարգավիճակից	
				Կընդլայնվի բուժաշխատողների և բուժաշխատող չհանդիսացողների (ՀԿ-ների) կողմից ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունների և խորհրդատվության տրամադրումը	
				ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող բոլոր լաբորատորիաներում կներդրվեն որակի ներքին վերահսկման ընթացակարգեր և կիրականացվի որակի արտաքին վերահսկում	
ա. Բուժաշխատողների կողմից նախաձեռնված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունների և խորհրդատվության հետագա ընդլայնում	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած և խորհրդատվություն ստացած անձանց քանակը (հղի կանանցից բացի)	120000	2021	180000	181206
բ. ՄԻԱՎ վարակի հաստատման հետազոտությունների կատարում, ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, վերջնական ախտորոշում, համաճարագաբանական հետազոտություն	Նոր ՄԻԱՎ դեպքերի թիվը	425	2021	500	544

	ՄԻԱՎ դրական նոր դեպքերի տոկոսը, որոնք ախտորոշվել են ՁԻԱՀ-ի փուլում	45%	2020	38%	19%
գ. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների միջև համակարգչային ցանցի ստեղծում	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների միջև համակարգչային ցանցը ստեղծվել է, հաշվետվողականությունը բարելավվել է	-	2020	Հաշվե տվողականության բարձր մակարդակ	Հաշվե տվողականության բարձր մակարդակ
դ. Արտաքին և ներքին վերահսկման իրականացում					
ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաներում	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների քանակը, որտեղ ներդրված են որակի ներքին վերահսկման ընթացակարգեր	Բոլոր լաբորատորիաները	2020	Բոլոր լաբորատորիաները	Տվյալներ առկա չեն
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների քանակը, որոնք անցել են որակի արտաքին վերահսկում	65	2020	Բոլոր լաբորատորիաները	99
ե. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունների և խորհրդատվության, ինչպես նաև ՄԻԱՎ ախտորոշման գործնական խնդիրների առնչությամբ մեթոդական և գործնական օգնության, տեխնիկական աջակցության ցուցաբերում առողջապահական հաստատություններին	Մեթոդական և գործնական աջակցություն ստացած առողջապահական հաստատությունների քանակը	65	2020	100	99

զ. ՀԿ-ների կողմից ուղղորդված ԹՆՕ-ների, ԿՍԿ- ների և SUS-ների շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունների և խորհրդատվության տրամադրման ընդլայնում	ՀԿ- ների կողմից ուղղորդված ԹՆՕ-ների, ԿՍԿ- ների և SUS-ների մասնաբաժինը ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի ընդհանուր թվում	10%	2020	30%	19%
է. Բնակչության, ներառյալ ՄԻԱՎ-ով արակման առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններով ուղեկցվող հանրային միջոցառումների իրականացում, որոնք ուղղված են ՄԻԱՎ հետազոտությունների մասսայականացմանը և խթանմանը:	Իրականացված հանրային միջոցառումների քանակը	4	2019	25	10
4) Ռազմավարություն 4. Մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում				Մորից երեխային փոխանցումը վերացրած երկրի կարգավիճակը կպահպանվի Մորից երեխային փոխանցմամբ պայմանավորված ՄԻԱՎ-ով մանկական վարակվածության նոր դեպքերի գործակիցը կկազմի ≤50 100 000 կենդանի ծնունդների հաշվով Կրծքով կերակրող մայրերից երեխաներին ՄԻԱՎ վարակի փոխանցման ցուցանիշը կլինի <5% Կրծքով կերակրող մայրերից երեխաներին ՄԻԱՎ վարակի փոխանցման ցուցանիշը կլինի <2%	
ա. ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության տրամադրում բոլոր հղիներին	ՄԻԱՎ վարակի տարածվածությունը հղիների շրջանում	0.1%	2019	<0.1%	<0.1%
	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն անցած հղիների տոկոսը	96%	2019	>96%	

	Հղիների շրջանում ՄԻԱՎ հետազոտություն իրականացնող նախածննդյան կլինիկաների լաբորատորիաների թիվը	16	2020	58	87
բ. ՀՌՎ կանխարգելիչ բուժման ապահովում ՄԻԱՎ վարակակիր հղիների և նրանցից ծնված երեխաների համար	ՀՌՎ կանխարգելիչ բուժում ստացած ՄԻԱՎ դրական հխիների տոկոսը	99%	2019	100%	100%
	ՀՌՎ կանխարգելիչ բուժում ստացած ՄԻԱՎ դրական հխիների թիվը	35	2019	60	63
գ. Հղիների համար ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություններ իրականացնող առողջապահական հաստատություններին բավարար քանակությամբ թեստ-հավաքածուների տրամադրում	Թեստ հավաքածուների քանակը	42000	2020	70000	92500
դ. ՄԻԱՎ դրական հղիներից ծնված նորածիններին կաթնախառնուրդներով ապահովում, անհրաժեշտության դեպքում	Կաթնախառնուրդներով ապահովված նորածինների քանակը	37	2020	60	55
ե. Հղիության ընթացքում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ երկրորդ հետազոտության իրականացում	Հղիության ընթացքում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ երկրորդ հետազոտություն անցանց հղիների մասնաբաժինը	12%	2020	>96%	Տվյալներ առկա չեն
զ. ՄԻԱՎ/ՁԻԱՀ ոլորտը կարգավորող ներկայիս օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և փոփոխում անհրաժեշտության դեպքում	Օրենսդրական դաշտն ուսումնասիրվում և, անհրաժեշտության դեպքում, փոփոխվում է	1	2019	Օրենսդրական դաշտն ուսումնասիրվել և, անհրաժեշտու թյան դեպքում, փոփոխվել է	Օրենսդրական դաշտն ուսումնասիրվել և, անհրաժեշտու թյան դեպքում, փոփոխվել է
II. ԲՈՒԺՈՒՄ, ԽՆԱՄՔ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ					
1) Ռազմավարություն 1. ՄԻԱՎ դրական անձանց համար ՀՌՎ բուժման հասանելիության ապահովում				ՄԻԱՎ վարակով ախտորոշված անձանց 95% կստանա ՀՌՎ բուժում	
				ՀՌՎ բուժում ստացող բոլոր անձանց 95%-ի մոտ կարձանագրվի վիրուսային ծանրաբեռնվածության նվազում	
				ՄԻԱՎ-ով պայմանավորված մահվան դեպքերի տարեկան քանակը կնվազի	

				ՄԻԱՎ դրական անձանց շրջանում տուբերկուլյոզից մահվան դեպքերը կնվազեն 75%-ով	
				ՄԻԱՎ դրական անձանց շրջանում հեպատիտ Բ-ից և հեպատիտ Ց-ից մահվան դեպքերը կնվազեն 10%-ով	
				ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանն ու խտրականությունը կնվազի	
ա. ՄԻԱՎ վարակակիր պացիենտների հետագա հսկողության իրականացում	Խնամքի հաստատություններ ուղղորդված ՄԻԱՎ վարակակիր պացիենտների քանակը	3000	2020	3700	3734
	Խնամքի հաստատություններում պահվող ՄԻԱՎ վարակակիր պացիենտների քանակը	2633	2021	3330	2762
				90%	74%
բ. ՄԻԱՎ վարակակիր պացիենտների զուգընկերների շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության անցկացում	Հետազոտված մշտական զուգընկերների տոկոսը	85%	2020	92%	78%
գ. ՄԻԱՎ վարակակիր պացիենտների հետագա հսկողության համակարգի բարելավում	Խնամքի հաստատություն ուղղորդված նոր ախտորոշված անձանց համամասնությունը	-	2020	95%	95%
	Խնամքի հաստատություն ուղղորդված անձանց թվում հաստատությունում պահվող անձանց մասնաբաժինը	-	2020	92%	32%
դ. Հետկոնտակտային կանխարգելման իրականացում մասնագիտական և ոչ մասնագիտական գործունեությամբ պայմանավորված ՄԻԱՎ վարակի ձեռք բերման ռիսկի ենթարկվող անձանց, այդ թվում՝ դիսկորդանտ զույգերի համար	Հետկոնտակտային կանխարգելում ստացածների քանակը	30	2020	50	104

ե. ՄԻԱՎ/ՁԻԱՀ հետազոտությունների և խորհրդատվության, բուժման և խնամքի, ինչպես նաև ՄԻԱՎ վարակի հսկողության ազգային պրոտոկոլների պարբերաբար վերանայում՝ դրանք ԱՀԿ ուղեցույցներին համապատասխանեցնե լու նպատակով	Թարմացված		2018	ՀՌՎ ազգա յին պրոտ կոլները թարմացվել են	ՀՌՎ ազգա յին պրոտ կոլները թարմացվել են
	ՄԻԱՎ/ՁԻԱՀ ազգային պրոտոկոլներ				
զ. ՀՌՎ բուժման ապահովում ՄԻԱՎ վարակակիր պացիենտների համար, բուժման կլինիկական և լաբորատոր մոնիտորինգի իրականացում	ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ դրական չափահասների և երեխաների քանակը հաշվետու տարվա վերջում	2345	2020	3700	3823
	Բուժման լաբորատոր մոնիտորինգ անցած անձանց քանակը և տոկոսը	85%	2020	3515	3121
				95%	82%
	Առաջին շարքի սխեմաներով ՀՌՎ բուժում ստացող պացիենտների քանակը	2349	2021	3441	3602
		(91.1%)		93%	94%
	Երկրորդ շարքի սխեմաներով ՀՌՎ բուժում ստացող պացիենտների քանակը	221	2021	240	212
		(8.6%)		(6.5%)	6%
	ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց շրջանում ՀՌՎ բուժում ստացողների տոկոսը	55.1%	2020	65%	80%
	ՄԻԱՎ ունեցող մարդկանց տոկոսը, ովքեր սկսել են ՀՌՎ բուժումը ունենալով CD4 <200 բջիջ/մմ^3	36%	2018	30%	Տվյալներ առկա չեն
	ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց տոկոսը, ովքեր ունեն վիրուսային ծանրաբեռնվածության չհայտնաբերվող մակարդակ	82%	2020	88%	86%
է. ՄԻԱՎ վարակակիր պացիենտների վարման գործնական հարցերի առնչությամբ մեթոդական և գործնական օգնության, տեխնիկական աջակցության տրամադրում առողջապահական հաստատություններին	Մեթոդական և գործնական աջակցություն ստացած առողջապահական հաստատությունների քանակը	1	2020	Բոլոր առող ջապահական հաստատություններում	Բոլոր առող ջապահական հաստատություններում

	ՄԻԱՎ պացիենտների համար ՀՌՎ բուժման դեղեր ստացած առողջապահական հաստատությունների քանակը	1	2020	4	4
ը. Օպորտունիստական վարակների ախտորոշում, բուժում և կանխարգելում	Օպորտունիստական վարակների բուժում ստացածների քանակը	239	2015	200	142
	Օպորտունիստական վարակների կանխարգելում ստացածների քանակը	138	2015	200	553
թ. ՄԻԱՎ վարակակիր պացիենտներին խնամքի և աջակցության տրամադրում	Խնամք և աջակցություն ստացածների քանակը	1800	2021	2250	2762
	ՄԻԱՎ վարակակիր չափահասների և երեխաների տոկոսը, ովքեր պետք է շարունակեն իրենց բուժումը ՀՌՎ բուժման մեկնարկից 12 ամիս անց	81%	2020	87%	72%
թա. Հիվանդանոցային բուժման տրամադրում ՄԻԱՎ վարակակիր պացիենտներին	Հիվանդանոցային բուժում ստացած ՄԻԱՎ վարակակիր պացիենտների քանակը	45	2020	50	181
թբ. ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի (ներառյալ ՄԻԱՎ- ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի ու խտրականության) վերաբերյալ դասընթացների, սեմինար-վարժանքների իրականացում բուժաշխատողների համար	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ դասընթացների և սեմինար-վարժանքների մասնակցած բուժաշխատողների քանակը	120	2020	235	503